Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Ն. ԴՈՒԲՐՈՎՍԿԻ, Կ ՊԱՎԼՅՈՒՉԵՆԿՈ

374.3:35
Դ-82

# ԱԿՈՒՄԲՆԵՐԸ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ԱՆԿՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՐԿՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ՊԵՏՀՐԱՏ 1932 ՅԵՐԵՎԱՆ

4.04.2013
53102
374.3
Դ--89
0120-10
1007
33690

Ն. ԴՈՒԲՐՈՎՍԿԻ, Կ. ՊԱՎԼՈՒՉԵՆԿՈ

# ԱԿՈՒՄԲՆԵՐԸ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ԱՆԿՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՐԿՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ՊԵՏՀՐԱՏ 1932 ՅԵՐԵՎԱՆ

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿ. № 1934
ԳԼԱՎԼԻՏ 699 (Բ)
ՊԱՏՎԵՐ 6225
ՏԻՐԱԺ 4000

Թարգմ. Հ. Լևոնյան    Խմբագրեց Հ. Հայկազունի

# ԱՌԱՋԱԲԱՆ

Յերկրի պաշտպանունակության ամրացման գործում ակումբներն ու կարմիր անկյունները հսկայական դեր են խաղում:

Ակումբները և կարմիր անկյուններր կուլտ-կրթական աշխատանքի բոլոր ձևերի ու տեսակների միջոցով աշխատավորության ուշադրությունը մոբիլիզացիայի պետք է յենթարկեն պատերազմի վտանգի, սոցիալիստական շինարարության և յերկրի պաշտպանության հարցերի շուրջը:

Զորահավաքի և պատերազմի ժամանակ ակումբների առաջ դրվելու յեն մի ամբողջ շարք նոր խնդիրներ, վորն ակումբները պետք է լուծեն հարվածային կարգով և այն կարճ ժամկետներում, վորպիսիք կառաջադրի զորահավաքը:

Ներկա ձեռնարկի նպատակը զուտ հրահանգչական բնույթ է կրում:

Կարճ ու սխեմատիկ ձևով մենք այստեղ թվարկում ենք այն մի շարք խնդիրները, վոր դրված են կուլտակումբի առաջ ռազմական պրոպագանդայի ասպարեզում խաղաղ ժամանակ, ինչպես նաև նշում ենք զորահավաքի շրջանի մի շարք հիմնական խնդիրները, վորի համար օգտագործում ենք փորձնական զորահավաքների ժամանակ մեր ձեռք բերած փորձը:

Պրոֆմիությունների կուլտակտիվը, յելնելով տեղական փորձից, անկասկած այս ձեռնարկի մեջ կմտցնի մի շարք այնպիսի ճշտումներ, վորոնք կոգնեն վերացնելու ձեռնարկում յեղած թերությունները:

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

## I. ԿՈՒԼՏ-ԿՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՅԵՐԿՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Պատերազմի վտանգի աճումը և յերկրի ինդուստրացման ու գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման բուռն տեմպերի հիման վրա հաջողությամբ ծավալվող լայնածավալ սոցիալիստական արշավը պահանջում են, վոր պրոֆմիությունները վողջ պրոֆաշխատանքի բովանդակության, մեթոդների ու ձևերի վերակառուցման ընթացքում՝ «Յերեսներս դեպի ՍՍՀՄ-ի պաշտպանության խնդիրներ» լոզունգով վերակառուցման յենթարկեն նաև կուլտուր-քաղաքական և ակմբային աշխատանքը:

Բանվորական մասսաների ակտիվության հսկայական աճումը, հետզհետե ավելի ու ավելի ծավալվող սոցմրցումն ու հարվածայնությունը և բանվորական մասսաների կուլտուրական կարիքների աճումը համառորեն պահանջում են պրոֆմիությունների կուլտուր-քաղաքական աշխատանքի շրջադարձը դեպի արտադրություն, արդֆինպլանների կատարման և տեխնիկայի տիրապետման հաստատուն նշանաբանով:

Խորհրդային ձեռնարկությունների ակումբների աշխատանքի փորձը ցույց է տալիս, վոր նրանց աշխատանքի մեջ մինչև այժմ էլ դեռևս գոյություն ունեն ոպորտունիզմի և սոսկական կուլտուրպարարության տարրեր: Շատ ակումբներ իրենց աշխատանքը չեն շաղկապում ձեռնարկությունների քաղաքական-արտադրական և կուլտուրական կյանքի հետ, իրենց աշխատանքի մեջ չեն անդրադարձնում արտադրական պրոցեսները, սոցմրցումը և հարվածայնությունը:

Ակումբները և կարմիր անկյունները դեռևս իրենց աշխատանքը չեն վերակառուցել՝ յերկրի պաշտպանության նպատակով ռազմական պրոպագանդա ծավա-



լելու և աշխատավորությանը ռազմական պատրաստություն տալու ուղղությամբ:

Ակումբների և կարմիր անկյունների ռազմական թույլ աշխատանքի ամենագլխավոր թերությունները հետևյալներն են.

ա) թերագնահատվում է պատերազմի վտանգը և դրա հետևանքով բանվոր դասակարգի ու վողջ աշխատավորության ուշադրությունը բավարար չափով մոբիլիզացիայի չի յենթարկվում յերկրի պաշտպանության հարցերի շուրջը.

բ) ակումբները թույլ կապ են պահպանում Կարմիր բանակի հետ, Կարմիր բանակի պրոլետարական շեֆության հարցերի նկատմամբ հարկ յեղած ուշադրությունը բացակայում է.

գ) ռազմական պրոպագանդայի համար պատրաստված կադրեր չկան, Բանվորա-գյուղացիական Կարմիր բանակի զորացրվածները թույլ չափով են օգտագործվում, բավարար չափով հաշվի չեն առնվում Պաշտ-Ավիաքիմի կազմակերպությունները, վորպես յերկրի պաշտպանունակության ամրացմանն օժանդակող ըստ ամենայնի մասսայական կազմակերպություններ:

ՀԱՄԿԽ-ի V պլենումը, պրոֆմիությունների վերակառուցման ուղղությամբ կատարված աշխատանքի արդյունքներն ամփոփելով, միաժամանակ արձանագրեց այն փաստը, վոր մեր ձեռնարկությունների մեծ մասում կուլտ-կրթական աշխատանքի միասնական ծրագիր գոյություն չունի, և իր ամբողջ սրությամբ դրեց կուլտաշխատանքի միասնական պլանի մասին ղեկավար մարմինների տված կարևորագույն դիրեկտիվների գործնական իրականացման հարցը:

Կուլտուր-քաղաքական աշխատանքի միասնական պլան ստեղծելու և այն իրագործելու հիմնական պայմանն այն պետք է լինի, վոր իրենք՝ բանվորական մասսաներն ակտիվ մասնակցություն ունենան կուլտուրական շինարարությանը, կուսակցության գլխավոր գծի իրականացման համար պայքար մղելով յերկու ֆրոնտի վրա, հատկապես ընդդեմ աջ թեքման՝ վորպես տվյալ շրջանի գլխավոր վտանգի:

Կուլտուր-քաղաքական աշխատանքի միասնական պլանը պետք է վերացնի ձեռնարկություններում կուլտուր-քաղաքական աշխատանք կատարող կազմակերպությունների աշխատանքի զուգահեռականությունը և նրանց գործողությունների միասնություն ապահովի:

Կուլտաշխատանքի միասնական պլան ստեղծելով, պրոֆկազմակերպությունները իրենց խնդիր պետք է առաջադրեն՝ կուլտուրական հեղափոխության պրոբլեմների լուծման և արդֆինպլանների կատարման ու գերակատարման հետ կապված հարցերի վրա շրջանակն ընդգրկելուն զուգընթաց, ապահովել նաև բոլոր այն հարցերի ընդգրկումը, վոր կապված են պաշտպանության, ռազմական պրոպագանդայի, Պաշտ-Ավիաքիմի և այդ կարգի այլ խնդիրների հետ:

Ռազմական պրոպագանդայի հարցերը կուլտաշխատանքի միասնական պլանի սխեմայում, նրա հիմնական բաժինները կազմելիս, պետք է ըստ ամենայնի լրիվ արտացոլում ունենան ակումբների և կարմիր անկյունների ամբողջ աշխատանքում: Դժբախտաբար, մենք մինչև օրս էլ ունենք առանձին պրոֆկազմակերպություններ, վորոնք ոպորտունիստական թերագնահատում են ցույց տալիս ռազմական աշխատանքի նշանակության: Այդպիսի տարրերին պետք է հարվածել ամբողջ վճռականությամբ, ձեռնարկությունների կուլտուր-քաղաքական աշխատանքի միասնական պլան կազմելիս ռազմական աշխատանքը դնելով բոլոր հասարակական կազմակերպությունների և աշխատավորական մասսաների ուշադրության կենտրոնում:

## Ռազմական աշխատանքի միասնական պլանը

Ձեռնարկության ռազմական աշխատանքի կազմակերպման համար մեծ նշանակություն ունի նաև «ռազմական աշխատանքի միասնական պլանը»: Ռազմական աշխատանքի ճիշտ կազմակերպումը կարող է ապահովվել միայն այն բանով, վոր յուրաքանչյուր ձեռնարկությունում ռազմական աշխատանքի միասնական պլան



մշակվի, վորտեղ ճիշտ կերպով ցույց տրվի, թե վո՛ր կազմակերպությունն ինչպիսի կոնկրետ աշխատանք է կատարելու պաշտպանության ամրացման համար, քանի՛ բանվոր և բանվորուհի յեն ընդգրկվելու, ինչ ժամկետում և ինչպիսի ռազմական մասնագիտություն է սովորեցնելու և այլն: Համակարգելով բոլոր կազմակերպությունների ռազմական աշխատանքը, միասնական ռազմական պլանը նպատակ պետք է ունենա հիմնովին վերացնելու աշխատավորության ռազմական անգրագիտությունը:

Ռազմական աշխատանքի միասնական պլանի իդեան ծնունդ առավ առանձին ձեռնարկություններում «պաշտպանության տասնօրյակի» ընթացքում: Ներկայումս նա պետք է լայն տարածում ունենա և գործնականում իրականացվի բոլոր գործարաններում:

Ռազմական աշխատանքը յուրաքանչյուր ձեռնարկությունում այնպես պետք է տանել, վոր նա սերտորեն շաղկապվի արտադրական առանձնահատկությունների ու հնարավորությունների հետ, վոր պաշտպանության խնդիրներն ու նրանց կատարման ժամկետները պարզ ու հստակ լինեն ամբողջ ձեռնարկությանը և առանձին ցեխերին ու առանձին բանվորներին: Պետք է գործն այնպես դնել, վոր իրոք յուրաքանչյուր բանվոր և յուրաքանչյուր բանվորուհի զինվի ռազմական գիտելիքներով, վոր յուրաքանչյուրն իմանա իր տեղը և կարողանա ոգուտ բերել պաշտպանության գործին: Դրա համար յուրաքանչյուր ձեռնարկությունում պետք է մշակել ռազմական աշխատանքի միասնական ծավալուն պլան, վորպես կուլտաշխատանքի ընդհանուր միասնական պլանի մի մասը:

Ռազմական աշխատանքի հարաճուն նշանակությունն այլևս թույլ չի տալիս մինչև այժմ գոյություն ունեցող այն կարգը (ավելի հաճախ՝ անկարգությունը), յերբ ռազմական աշխատանքը կա՛մ կուլտխորհրդի աշխատանքի յերրորդական բնագավառներից մեկն էր հանդիսանում, կա՛մ «ինքնուրույն կերպով» (այսինքն առանց մյուս կազմակերպությունների վորևէ աջակցու-

թյան) պլանավորվում եր Գաջր-Ալիխաքիմի միջոցով։ Կուլտխորհուրդները պետք է բարձրացնեն իրենց դերը ռազմական աշխատանքում, հարկավոր է բարձրացնել Գաջր-Ալիխաքիմի բջիջների հեղինակությունը, ամեն կերպ ուժեղացնել նրանց ցույց տրվող օգնությունը, բայց, դրանից բացի, պետք է կազմել ռազմական աշխատանքի միասնական ծավալուն պլան, վորտեղ մտնի ինչպես Գաջր-Ալիխաքիմի, այնպես էլ ձեռնարկության անխտիր բոլոր կազմակերպությունների աշխատանքը պաշտպանության գծով։

Ինքն ըստ ինքյան հասկանալի յե, վոր պլանի կազմության գործին լայնորեն պետք է ներգրավել մասսաների նախաձեռնությունը (ռազմական աշխատանքի վերաբերյալ առաջարկությունների հավաք կազմակերպելով, ռազմական աշխատանքի հանդիպական պլան կազմակերպելով և այլն)։ Գաջր-Ալիխաքիմի կազմակերպությունները և գործարանեցկոմների կուլտխորհուրդները միասնական աշխատանքի ռազմական պլանի մշակմանը մասնակից պետք է դարձնեն նաև չեֆարկյալ զորամասերին, վորոնք նույնպես պատասխանատու պետք է լինեն այդ պլանի կատարման համար։

Ռազմական աշխատանքի միասնական պլանը պետք է մշակել վոչ միայն ամբողջ ձեռնարկության համար, այլև ըստ ցեխերի. այդ պլանը պետք է հասցնել մինչև դազգյահը, մինչև առանձին բանվորն ու բանվորուհին։ Գործնական աշխատանքն անտարակույս, կարևոր ճըշտումներ կմտցնի պլանի սկզբնական ուրվագծի մեջ և կտա լավագույն փորձը, վորը կարելի կլինի իբրև որինակ վերցնել և ձեռնարկություններից խորհտնտեսություններն ու կոլտնտեսությունները փոխադրել։ Մի բան անվիճելի յե, վոր ռազմական աշխատանքի միասնական ծավալուն պլանն անհրաժեշտ է. վոր այն պետք է մշակել ամենուրեք, յելնելով մեր միջազգային դրությունը բացատրելուց և յերկրի պաշտպանությունն ամրացնելու ուղղությամբ կատարվող աշխատանքից։

Ռազմական աշխատանքի միասնական պլան ստեղծելու և կիրառելու գործի ապահովման համար հետև-



յալ կերպ պետք է վարվել. ձեռնարկության կուլտխորհրդին կից ռազմական աշխատանքի համար պետք է ստեղծել մշտական խորհրդակցություն, վորի խնդիրը պետք է լինի՝ վորոշել առանձին կազմակերպությունների մասնակի խնդիրները, ամեն տեսակետից համաձայնեցնել այդ խնդիրները և ապահովել նրանց կապը կուլտուր-քաղաքական աշխատանքի, ձեռնարկության արտադրական կյանքի և հիմնական տնտեսական-քաղաքական կամպանիաների հետ։

Խորհրդակցությունը կազմվում է Գաջր-Ալիխաքիմի աշխատողներից և կուսկազմակերպությունների, գործարկոմի (կուլտխորհրդի) և այն հիմնական կամավոր ընկերությունների ներկայացուցիչներից, վորոնց գծով հնարավոր է լուծել պաշտպանության գործի ոժանդակման այս կամ այն խնդիրները։ Խոշոր ձեռնարկության Գաջր-Ալիխաքիմի բջիջի բյուրոն կամ նրա խորհուրդը և ազատված պրոֆաշխատողները պետք է մասնակցեն պլանավորման, խորհրդակցության կողմից քննության առնված պլանների կիրառման և նրանց կատարման ստուգման աշխատանքներին։

Գաջր-Ալիխաքիմը ձեռնարկությունում ղեկավար դեր պետք է վերցնի ռազմական աշխատանքի պլանների մշակման, աշխատանքի ժամկետների վորոշման և այդ կարգի այլ խնդիրների կատարման գործում։ Էական կարեվորություն ունի ընդգծել այս աշխատանքում պրոֆմիութենական և Գաջր-Ալիխաքիմի կազմակերպությունների կապը դպայիորեն ամրացնելու անհրաժեշտությունը։ Այս պահանջը պետք է ապահովել վոչ միայն ընդլայնելով պրոֆաշխատողների մասնակցությունը Գաջր-Ալիխաքիմին ցույց տրվելիք ղեկավարության գործում, այլև յուրաքանչյուր պրոֆկազմակերպության կազմում ռազմական լիազոր նշանակելով, և վոր ամենագլխավորն է, գործարանեցկոմների միջոցով քննարկելով խորհրդակցության կազմած պլանները և նրանց մեջ անդրադարձնելով պրոֆաշխատանքի ու կուլտաշխատանքի վողջ սիստեմը։

6625—2

## II. ՌԱԶՄԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՆ ԱԿՈՒՄԲՈՒՄ

Համաշխարհային տնտեսական ճգնաժամի ծավալման, կապիտալիստական յերկրների հեղափոխական շարժման աճման և ԽՍՀՄ-ի սոցիալիստական շինարարության հաջողությունների զարգացման հետեվանքով պատերազմի վտանգն աճում է օրեցօր, մնալով իբրև միանգամայն ռեալ սպառնալիք պրոլետարական պետության համար:

Պատերազմի վտանգը և ԽՍՀՄ-ի դեմ ինտերվենցիա կազմակերպելու սպառնալիքը համառորեն պահանջում են ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգից և վողջ աշխատավորությունից, սոցիալիստական պետության կառուցման տարված աշխատանքին զուգընթաց՝ անդուլ ուշադրություն ցուցաբերել և անմիջական ակտիվ մասնակցություն ունենալ Խորհրդային Միության պաշտպանունակության ամրացման գործին, ինչպես նաև ավելացնել Կարմիր բանակի մարտական ու տեխնիկական հզորությունը:

Աշխատավորական լայն մասսաները պետք է յուրացնեն ռազմական գործի և ռազմական տեխնիկայի ունակությունները, կռվի և պաշտպանության միջոցները,— ահա մեր յերկրի պաշտպանունակության ամրացման կարևորագույն պայմաններից մեկը: Ուստի ռազմական պրոպագանդան, վոր ծառայում է յերկրի պաշտպանության գործին, պրոֆմիությունների վողջ կուլտուր-քաղաքական աշխատանքի անբաժան մասը պետք է կազմի: Պրոֆմիությունները, վորպես աշխատավորության մասսայական կազմակերպություններ, պետք է լինեն սոցիալիստական հայրենիքի պաշտպանության ամրացման գործի ամենաակտիվ մասնակիցներն առաջին հերթին, ինչպես նաև պատասխանատու լինեն բանվորական լայն մասսաների և վողջ աշխատավորության մեջ կազմակերպվող ռազմական աշխատանքի ու ռազմական պրոպագանդայի դրության համար:

Ակումբները և կարմիր անկյունները, վոր հիմնականում պրոֆմիությունների կուլտ-քաղաքական աշխատանքի կենտրոններն են հանդիսանում, պետք է միաժամանակ կենտրոն հանդիսանան նաև ռազմական աշխատանքի համար: Բայց և այնպես մինչև օրս ակումբներն ու կարմիր անկյունները դեռևս բավարար չափով չեն յուրացրել այս խնդիրները: Շատ հաճախ մենք տեսնում ենք, վոր ռազմական աշխատանքի և ռազմական պրոպագանդայի բովանդակությունն ու ձևերը սահմանափակվում են լոկ հրաձգային սպորտով: Ռազմական պրոպագանդան դեռևս մասսայական չէ, նա կրում է պատահական, կամպանիոն բնույթ, չի համարեցվում և չի շաղկապվում ձեռնարկության արտադրական խնդիրներին և առանձնահատկություններին: Դրանից բացի, կապ և փորձի փոխանակության գոյություն չունի բանվորական ակումբների և ԲԳՆԲ-ի ու յենթաշեֆ զորամասերի ակումբների միջև:

Անհրաժեշտ է վճռականորեն վերակառուցել ակումբների և կարմիր անկյունների աշխատանքը, այն հաշվով, վոր ակումբային աշխատանքի վողջ բովանդակությունը տոգորված լինի պաշտպանության տարրերով:

Ռազմական պրոպագանդայի հիմնական բովանդակությունը կուլտուր-քաղաքական աշխատանքի սիստեմում, պետք է լինի հետևյալը—աշխատավորներին մանրամասն կերպով ծանոթացնել ու բացատրել ԽՍՀՄ-ի միջազգային ու ընդհանուր քաղաքական ընթացիկ դրությունը և առաջին հերթին պատերազմի վտանգը, վորպես ընթացիկ միջազգային իրադրության գլխավոր որակ:

Այս հարցերը պարզաբանելիս, պետք է հատկապես շեշտ դնել պատերազմի վտանգն ու նրա դեմ մղվող պայքարի ուժեղացումը թերագնահատելու հարցի վրա. վորովհետև այդ թերագնահատությունը հիմնական վտանգներից է պրոլետարիատի և նրա ավանգարդ կոմունիստական կուսակցության համար: Պատերազմի վտանգի թերագնահատությունը նվազեցնում է պրոլետարիատի աչալրջությունը և չի ուժանգակում, վորպեսզի պրոլետարիատը պատրաստվի կապիտալիստական յերկրների հարձակման պահին պաշտպանելու Խ. Միությունը:

Պարզաբանելով այն պայքարը, վոր մղում ենք մենք խաղաղության համար, մերկացնելով նոր պատերազմներ պատրաստող բուրժուազիայի խաղաղասիրական սուտը, — մենք մեր կուլտուր-քաղաքական ու կրթական աշխատանքի ամբողջ ցանցի միջոցով պետք է վողջ աշխատավորության ուշադրությունը հրավիրենք ռազմական ուսուցման և նրանց ռազմական ու ավիաքիմիական անգրագիտության վերացման վրա, Պաջը-Ավիաքիմի հետ միասին գործնական աշխատանք կատարենք աշխատավորության ռազմա-տեխնիկական պատրաստության ուղղությամբ, ուշադրության կենտրոնը դարձնենք հակաոդային ու քիմիական պաշտպանության պրոպագանդայի գործադրումը, մասսայականացնենք Բ.Գ.Կ.Բ-ի շինարարությունն ու հզորությունը, զարգացնենք Կարմիր Բանակի մասսայական-պրոլետարական շեֆության պրակտիկան և ամրացնենք նրա մարտական ու տեխնիկական հզորությունը:

Ռազմական պրոպագանդայի ուղղությամբ ակումբների կատարած աշխատանքում պատշաճ բարձրության վրա պետք է դնել Պաջը-Ավիաքիմի կազմակերպության բջիջների ժողովրդականացումը, միջոցներ ձեռք առնելով լայնորեն ներգրավելու ձեռնարկությունների ու հիմնարկությունների բանվորներին և ծառայողներին նրա շարքերը, ակումբների և կարմիր անկյունների աշխատանքում այդ կազմակերպության հաջող աշխատանքի համար բոլոր ամենալայն նպաստավոր պայմաններ ստեղծելով:

Դժբախտաբար, մեզ մոտ շատ տեղ այդպիսի համաձայնեցում ու շաղկապում գոյություն չունի:

Մի ամբողջ շարք պլենումներում և խորհրդակցություններում տեղական աշխատողները բողոք փաստեր էյին հաղորդում մի քանի պրոֆկազմակերպությունների և ակումբների վրդովեցուցիչ վարքի մասին. այդ կազմակերպություններն ու ակումբները վոչ միայն իրենք ռազմական աշխատանք չէյին կատարում և չէյին աջակցում Պաջը-Ավիաքիմին այդ աշխատանքը կատարելու, այլ անգամ ակումբից դուրս էյին շպրտում ռազմական և Պաջը-Ավիաքիմի անկյունները, թույլ չտա-



լով, վոր այդ կազմակերպությունները ռազմական աշխատանք ծավալեն ակումբներում և կարմիր անկյուններում:

## Ռազմական անկյունը վորպես ռազմական պրոպագանդայի կենտրոն

Ակումբում և կարմիր անկյունում ռազմական պրոպագանդայի կենտրոն պետք է լինի ռազմական անկյունը կամ ռազմական կաբինետը: Ռազմական անկյունը պետք է հանդիսանա այն վայրը, վորտեղ աշխատավորները կարողանան այս կամ այն ռազմական գիտելիքը ձեռք բերել և վերացնել իրենց ռազմա-տեխնիկական անգրագիտությունը:

Ռազմական անկյունի (կաբինետի) շուրջը կազմվում և աշխատում են ռազմա-պրոպագանդիստական կազմակերպություններ (ակտիվիստների խմբեր, ռազմական գիտելիքների խմբակներ, ավիաքիմ-ջոկատներ և այլն), նրանք էլ ռազմական գիտելիքներ են տարածում տվյալ ձեռնարկության բանվորների և ծառայողների մեջ: Ռազմական անկյան կազմակերպման և աշխատանքի միջոցով մենք կկարողանանք հասարակական կարծիք ստեղծել յերկրի պաշտպանության և աշխատավորների ռազմական պատրաստության հարցերի շուրջը, ամրացնել բանվորների կապը Կարմիր Բանակի հետ, նրանց ծանոթացնել ակտիվ ու պասիվ ոդաքիմիական պաշտպանության միջոցների հետ և ժողովրդականացնել Պաջը-Ավիաքիմի կազմակերպության բջիջները:

Ռազմական անկյուններն ակտիվ մասնակցություն պետք է ունենան այն կամպանիաներին, վորոնք կապված են յերկրի պաշտպանության, բանակի համալրման և այլ ռազմական հարցերի հետ:

Պաշտպանության հիմնական խնդիրների պրոպագանդան առաջադրելով իբրև հիմնական խնդիր և աշխատավորության ուշադրությունը սևեռելով ռազմական գործն ուսումնասիրելու կարևորության և անհրաժեշ-

ության ուղղությամբ, ռազմական անկյունները միաժամանակ պետք է լինեն ռազմական լաբորատորիաներ, վորտեղ պետք է կենտրոնացվեն անհրաժեշտ ուսումնական պիտույքներ, եքսպոնատները և զենքերը:

Ռազմական անկյան կազմակերպման և սարքավորման գործը պետք է դնել ակումբի ակտիվի և Պայք-Ակխաքիմի բջիջների ակտիվի վրա, ընդ վորում ռազմական անկյան կազմակերպելիս՝ անհրաժեշտ է ոգտագործել զինվորական մասերի և յինթաչեֆ զորամասերի ռազմական անկյունների փորձը, նրանց էլ մասնակից դարձնելով ռազմական անկյունների կազմակերպման ու սարքավորման գործին:

Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է աշխատել վերցնելի կազմակերպվող ռազմական անկյունը ռազմա-սպորտային թեքում ունենա: Որինակ՝ ռազմական անկյունը քիմիական գործարանում կազմակերպելու դեպքում՝ պետք է ձեռք բերել ռազմաքիմիական պաշտպանության և ընդհանրապես քիմիական պրոպագանդայի վերաբերյալ եքսպոնատներ ու ակնառու պիտույքներ. յերկաթուղայինների միության ակումբին կից կազմակերպվող անկյունում պետք է ունենալ այնպիսի նյութեր, վորոնք վերաբերվեն յերկաթուղային հանգույցների, հաղորդակցության ճանապարհների պաշտպանության և այլն: Ի հարկե, այս հատուկ թեքումները չպետք է փոխարինեն ռազմական անկյան հիմնական բովանդակությունը պաշտպանության հարցերի պրոպագանդայի, ռազմական գործի, հրաձգային սպորտի և այդ կարգի այլ խնդիրների տեսակետից, վորոնք առաջին տեղը պետք է գրավեն կազմակերպվող անկյան բովանդակության մեջ:

Ռազմական անկյան բոլոր ակնառու նյութերը պետք է այնպես դասավորել, վոր նրանք հեշտացնեն ռազմական խմբակների աշխատանքը, միաժամանակ անհրաժեշտ է այդ նյութերը պարբերաբար թարմացնել ու նորոգել, փոխել այն նյութերը, վորոնք հնացել են կամ բոլորովին պետք չեն:



Ակումբներին կից ռազմական անկյուններ կազմակերպելու և կահավորելու խնդրում պրոֆկազմակերպությունները պետք է նյութական օգնություն ցույց տան նախահաշվով բաց թողնված դրամարների չափով:

Ռազմական անկյան ամբողջ աշխատանքը պլանային բնույթ պետք է կրի: Կիրառելիք միջոցառումների ցուցակը պետք է այնպես համաձայնեցնել կուլտ-կրթական աշխատանքի մյուս տեսակների հետ, վոր մեկը մյուսին չխանգարի: Ռազմական անկյան ամբողջ աշխատանքը պետք է մտցնել ռազմական աշխատանքի միասնական պլանի մեջ:

## Ռազմական պրոպագանդայի ձևերն ու մեթոդները ակումբում

ՀԱՄԿԽ-ին կից համամիութենական առաջին ակումբային խորհրդակցությունը միանգամայն պարզ ու վորոշ սահմանեց ռազմական պրոպագանդայի ձևերն ու մեթոդները:

Ռազմական պրոպագանդայի ամենից ավելի կենդանի ու հիմնական ձևերը պետք է լինեն հետևյալները.

ա) կազմակերպել զրույցներ, գործնական զեկուցումներ, բարձրաձայն ընթերցանություններ և դասախոսություններ, միաժամանակ ցուցադրելով ռազմական հրատապ հարցերի վերաբերյալ դիապոզիտիվներ ու ակնառու պիտույքներ, որինակ մեր հարևանների և իմպերիալիստական մեծ պետությունների բանակների նորագույն տեխնիկան, ԲԳԿԲ-ի տեխնիկան (մոտորիզացիա, բանակի մեքենայացում, ավիացիա, քիմիա, և այլն), Թիկունքի արդյունաբերական կենտրոնների, յերկաթուղային հանգույցների և այլ կետերի պաշտպանություն օդաքիմիական հարձակումներից.

բ) ռազմական և ռազմա-քաղաքական խաղեր (ռազմական քաղքինակախաղ, վիկտորինա, հարց ու պա-

տասխան կանոնադրությունների շուրջը, Կարմիր բանակային լոտո և այլ սեղանի խաղեր).

գ) Հարց ու պատասխանի յերեկոներ ռազմական թեմաների շուրջը, իբրև կոնսուլտանտ մասնակից դարձնելով Կարմիր Բանակի և յենթաշեֆ զորամասերի ներկայացուցիչներին.

դ) Պաշտպանության յերեկոներ, գուման յերեկոներ յենթաշեֆ զորամասերի հետ, պահեստի հրամկազմի յերեկոներ, քաղաքացիական կռիվներին նվիրված հուշերի յերեկոներ և այլն.

յե) պաշտպանության հարցերին նվիրված ռադիոզեկուցումների խմբական ունկնդրում, ռազմական թեմաների նվիրված կինո-նկարների ցուցադրում.

զ) Էքսպոնատների և ակնառու պլակատների ցուցահանդեսներ, ծանոթություն զենքերի և հակագազը քիմիական պատերազմում ու պաշտպանության գործում կիրառելու և ոգտագործելու նորագույն յեղանակների հետ.

է) Էքսկուրսիաներ դեպի զորանոցներ, Կարմիր Բանակի ճամբարներ, պաշտպանության տներ, Պաջը-Ավիաքիմի թանգարաններ, այերոդրոմներ և այլն.

ը) ռազմական արշավներ և ռազմական զբոսանքներ, տակտիկական ոչ-բարդ խնդիրներ լուծելու նպատակով.

թ) Պաջը-Ավիաքիմի հետ միասին անցկացնել այն կամպանիաները, վոր կապված են ԽՍՀՄ-ի պաշտպանության հետ (պաշտպանության տասնօրյակ, ԲԳԿԲ-ի տարեդարձ, զորակոչ, զորացրում, ռազմական դպրոցների հավաքագրում, փիզկուլտուրայի շաբաթ և այլն):

Մասսայական ռազմական պրոպագանդայի հիմնական խնդիրն է՝ պրոֆմիության անդամներին ներգրավել Պաջը-Ավիաքիմի շարքերը, զանազան ռազմական խմբակները և ուսումնաշրջանային միավորները այնտեղ գործնական 5 ռազմական ուսուցում անցկացնելու համար, վորպիսին իր հերթին նպատակ ունի ԲԳԿԲ-ի վորակյալ ռեզերվ պատրաստել:

Բոլոր ռազմական խմբակները և ուսումնա-շրջանային միավորները ստեղծվում են Պաջը-Ավիաքիմի կազմա-



կերպությունների կողմից՝ ակումբների աջակցությամբ և գործարանեղկոմների ակտիվ մասնակցությամբ: Խըմբակներն աշխատում են Պաջը-Ավիաքիմի ծրագրով:

## Մամուլը պետք է սպասարկի պաշտպանության գործին

Պաշտպանության և աշխատավորների ռազմական պատրաստության գործում մամուլը խոշոր դեր է խաղում: Ոգտագործելով բուրժուական պետությունների հակախորհրդային ակտիվ պատրաստության բոլոր բազմազան և հերթական փաստերը, մամուլն այդ փաստերի հիման վրա որն որին պետք է դաստիարակի բանվորական մասսային, կոնկրետ կերպով ցույց տալով մեր թշնամիների ռազմա-քաղաքական դեմքը, նրանց նպատակներն ու շահերն ապագա հակախորհրդային պատերազմում և այլն: Դրանից բացի, մամուլը պետք է ոգտագործել, վորպես բանվորների և ծառայողների ամենալայն մասսաների ռազմական պատրաստությունը բարձր աստիճանի վրա դնելու լավագույն միջոցներից մեկը:

1007
33690

Ակումբների գրադարաններն ու ընթերցարանները նույնպես խոշոր դեր պետք է խաղան ռազմական պրոպագանդայի խնդրում: Թերթեր ու ժուռնալներ դուրս գրելիս, նոր գրքեր գնելիս, անհրաժեշտ է անպայման հաշվի առնել և գնել նույնպես պաշտպանության և ռազմական պրոպագանդայի հարցերի վերաբերյալ գրականություն: Չափազանց խոշոր նշանակություն ունի ռազմական գրականության ժողովրդականացումը, վորի համար հարկավոր է ակումբների գրադարան-ընթերցարաններին կից կազմակերպել ռազմ. գրականության ցուցահանդեսներ, ռազմ. գրքի յերեկոներ, լավագույն ընթերցողի կոնկուրսներ, իբրև կոնսուլտանտ՝ գրադարանի աշխատանքներին մասնակից դարձնել ռազմական աշխատողների և այլն: Ռազմական գործը ժողովրդականացնելու համար, անհրաժեշտ է, վոր գրադարանները հանձնարարական ցուցակներ կախ տան և պաշտ-

պանության հարցերի շուրջը ցուցահանդեսներ ու կոնսուլտացիաներ կազմակերպեն:

Գործարանային մամուլը, ակումբների և կարմիր անկյունների պատի թերթերը պետք է օժանդակեն մասսաների ընդհանուր ռազմական գրագիտության բարձրացմանը, կազմակերպելով նրանց ակտիվությունն ու մրցությունը խմբակների անդամների ինքնապատրաստության գործնական հարցերի շուրջը:

Ակումբների և կարմիր անկյունների աշխատանքում ռազմական պրոպագանդայի և պաշտպանության հարցերի ժողովրդականացման գործնական աշխատանքի ղեկավարությունն ապահովելու, ինչպես նաև մասսաների ուշադրությունը սրելու և սոցմրցման, ինքնաքննադատության և այլ միջոցներով թերությունները վերացնելու համար, անհրաժեշտ է հետևյալը՝

Առաջին. ակումբները և կարմիր անկյունները գործարանային մամուլում ու ժուռնալներում ղեկավարող նյութեր պետք է տան ռազմական պրոպագանդայի և ռազմական պատրաստության կազմակերպման հարցերի մասին, ինչպես նաև ռազմական աշխատանքի փորձի փոխանակություն կազմակերպեն.

Երկրորդ. աշխատել բանթղթակիցների ակտիվ ստեղծել և նրանց գործնական ու կանոնավոր հրահանգներ տալ ակումբի ռազմական աշխատանքի և պաշտպանության հարցերի լուսաբանումը պատշաճ բարձրության վրա դնելու ուղղությամբ.

Երրորդ. ձեռնարկությունների և հիմնարկությունների բոլոր տպագիր ու պատի թերթերում անհրաժեշտ է ունենալ հատուկ ռազմական բաժիններ կամ պաշտպանության անկյուններ.

Չորրորդ. վողջ պրոֆմիութենական մամուլում ապահովել ռազմական պրոպագանդայի հարցերի ըստ ամենայնի լրիվ լուսաբանում, կազմակերպել ակումբների և կարմիր անկյունների աշխատանքի ստուգատես՝ յերևան հանելու համար ռազմական աշխատանքի լավագույն և վատթարագույն կազմակերպման օրինակներ և այլն.



Հինգերորդ. կազմակերպել հատուկ ռազմական բյուլետենների և թերթերի պարբերական հրատարակություն, այդ հարմարեցնելով որացույցի վորոշ որերին (ԲԳԿԲ-ի տարեդարձ, պաշտպանության շաբաթ, ռազմական աշխատանքի ստուգատես այլն):

## Ակումբի դերը հրաձգային սպորտի զարգացման գործում

Հրաձգային սպորտը բանվոր-ծառայողների լայն մասսաների ռազմական պատրաստության գործում աչքի զարկող տեղ է գրավում և վերջին ժամանակներս լայն տարածում է գտել: Ակումբները և կարմիր անկյունները, առանց ռազմականացման և ռազմական պրոպագանդայի վողջ աշխատանքը հրաձգային սպորտով փոխարինելու, պետք է իրենց խնդիր առաջադրեն աշխատավորական լայն մասսաների մեջ ժողովրդականացնելու հրաձգային գործի հարցերը, ինչպես նաև հրաձգային խմբակների մեջ ներգրավելու վոչ միայն յերիտասարդներին, այլև կանանց ու չափահաս բանվորներին:

Պաշտ-Ավիաքիմի կազմակերպությունների հետ միասին ակումբները և կարմիր անկյունները պետք է նախաձեռնող լինեն զանազան հրաձգային մրցությունների ու կոնկուրսների կազմակերպման գործում, վորպիսիք հրաձգային սպորտի ժողովրդականացման լավագույն միջոցներն են հանդիսանում:

Ակումբների, կուլտուրայի պալատների և այդ կարգի այլ հաստատությունների նախահաշիվներում, հրաձգարաններ չլինելու դեպքում, անհրաժեշտ է նախատեսել նյութական միջոցներ՝ հրաձգարաններ, ռազմական հրաձգային կաբինետներ կազմակերպելու, զենք ձեռք բերելու և նման այլ նպատակների համար:

## Ռազմական պրոպագանդայի մասսայական ձևերը

Ակումբների ռազմական աշխատանքում հատուկ ուշադրություն պետք է կենտրոնացնել ռազմական պրոպագանդայի մասսայական ձևերի ու տեսակների կազ-

մակերդման վրա, վորոնց մեջ ներգրավել աշխատավորական լայն մասսաներին։ Այդ մասսայական ձևերի նպատակն է ժողովրդականացնել յերկրի պաշտպանության հարցերը։

Ռազմական պրոպագանդայի ուղղությամբ կատարելիք մասսայական աշխատանքի հիմնական ձևերն ու տեսակները հետևյալներն են.

Առաջին. կազմակերպել մասսայական ռազմական արշավներ ու զբոսանքներ՝ նպատակ ունենալով լուծել վոչ-բարդ տակտիկական խնդիրներ, կազմակերպել ինչպես ռազմա-հրաձգային, այնպես և զուտ զվարճացնող բնույթի մասսայական խաղեր.

Յերկրորդ. ակումբներում կազմակերպել պաշտպանության յերեկոներ, վորի համար օգտագործել ակումբի դրամատիկական, խմբերգային, յերաժշտական և այլ խմբակների ուժերը. Նպատակահարմար է պաշտպանության յերեկոները կազմակերպել զինվորական մասերի հետ միասին, մասնակից դարձնելով հրամկազմին, ռազմական խմբակներին և տվյալ ձեռնարկության Պաշը-Ավիաքիմի կազմակերպության ակտիվին.

Յերրորդ. Պաշտպանության հարցերի պրոպագանդա կազմակերպել կինոյի միջոցով, վորտեղ դնել ռազմական թեմա ունեցող ֆիլմերի ցուցադրությունը, դասախոսություններ և զեկուցումներ կազմակերպել ռազմական և ռազմա-քաղաքական հարցերի շուրջը։

Աշխատանքի մասսայական ձևերն ու տեսակները պետք է ամենից ավելի տարածված լինեն ամառները։

## Ֆիզկուլտուրան պետք է ծառայի պաշտպանության գործին

Ակումբները և կարմիր անկյունները ֆիզկուլտխորհուրդների հետ միասին պետք է ուշադրություն դարձնեն ֆիզկուլտուրայի ռազմականացման հարցերին։ Մարտիկի ֆիզիկական տոկունությունը մեկն է այն գլխավոր խնդիրներից, վոր իրեն առաջադրում է յուրաքանչյուր ժամանակակից բանակի մարտական պատրաստության ծրագիրը։ Յերկրի պաշտպանության



նպատակով աշխատավորների ֆիզիկական առողջացումն ու ամրացումը Խ. Միության համար գլխավոր խնդիրներից մեկն է հանդիսանում։ Ահա թե ինչո՛ւ ֆիզկուլտուրան պետք է մոտեցնել պաշտպանության պահանջներին, նրա մեջ ռազմականացման տարրեր մտցնելով։ Սխալ կլիներ կարծել, թե «ֆիզկուլտուրայի ռազմականացման» լոզունգն առաջադրելով՝ մենք կոչ ենք անում հրաժարվել ֆիզուլտպատրաստության ձևերից և այդ ֆիզկուլտպատրաստությունը գրեթե ամբողջապես փոխարինել ռազմական պատրաստությամբ։ Այն խնդիրները, վոր իրեն առաջադրում է ֆիզկուլտուրան աճող սերնդի ընդհանուր ֆիզիկական դաստիարակման ասպարեզում (աշխատանքի արտադրողականության բարձրացում, աշխատավորության կենցաղի առողջացում, խելացի ժամանցներ և այլն), մնում են և հիմա։ «Ֆիզկուլտուրայի ռազմականացման» լոզունգը նպատակ ունի լավագույն ձևով կազմակերպել ֆիզկուլտուրան Կարմիր բանակի կարիքների համար։ Այս խնդիրները բղխում են անմիջապես միջազգային քաղաքական ներկա իրադրությունից, և մենք պետք է այն իրագործենք ինչ գնով ուզում է լինի։

ՀԱՄԿԽ-ը ռազմական պրոպագանդայի աշխատանքի ուժեղացման մասին պրոֆկազմակերպություններին ուղղած իր դիմումի մեջ այս հարցի առթիվ հետևյալն է գրում.

> «... Ֆիզկուլտ խմբակների պարապմունքներում անհրաժեշտ է մտցնել ռազմական գիտելիքների և ունակությունների, առանձնապես ռազմա-գործնական վարժությունների տարրեր (հրաձգություն, վազք հատած տեղանքով, վազք խոչընդոտների միջով, սուսերամարտություն սվիններով և այլն)»։

Հետևաբար, վողջ ֆիզկուլտաշխատանքը կատարելու պրոցեսում մենք պետք է առաջին հերթին հաշվի առնենք ֆիզկուլտուրայի նկատմամբ առաջադրվող ռազմական պահանջները, այն հաշվով, սակայն, վոր վերջիններս չվնասեն ֆիզկուլտուրայի քանակական և վորակական աճման մակարդակին։

Իսկ ինչպիսի միջոցներով կարելի յե լավագույն և խելացի ձևով ոգտագործել խորհրդային ֆիզկուլտուրան աշխատավորության ռազմական պատրաստության նպատակների համար:

Այս հարցին պատասխան է տալիս ընկ. Ստարիկովն իր «Как военизировать спорт» բրոշյուրում, վորը մենք հանձնարարում ենք մեր ակումբներին և կարմիր անկյուններին:

Այստեղ կարելի յե նշել վեց հիմնական մոմենտ.

Առաջին. ոժանդակել ֆիզկուլտուրայի հիմնական միջոցների ըստ ամենայնի լայն տարածմանը (սպորտ, մարմնամարզություն, խաղեր) և առողջապահական ունակությունների զարգացմանը միությունների աշխատավորական մասսաների մեջ: Անկախ այդ միջոցների «ռազմականացման» չափից (նրանց մի մասն ընդհանրապես ռազմականացման չի յենթարկվում), նրանք հսկայական ազդեցություն կունենան զինապարտ ազգաբնակության ընդհանուր ֆիզիկական մակարդակի բարձրացման վրա:

Յերկրորդ. ֆիզկուլտուրայի բազմաթիվ տեսակներից ընտրել և հանձնարարել այնպիսիները, վորոնք ամենից ավելի ոգտակար են մարդու մարտական հատկությունների դաստիարակման համար:

Յերրորդ. գործնական ֆիզկուլտաշխատանքի զգալի մասը մարմնամարզական սրահներից ու հրապարակներից տեղանքը փոխադրել:

Չորրորդ. ռազմա-գործնական բնույթ ունեցող վարժությունները մտցնել սպորտային մարմնամարզական շարժումների և խաղերի մեջ: Պարտադիր պայման է, վոր այս վարժությունները լիովին համապատասխանեն ֆիզկուլտուրայի այն տեսակին, վորի մեջ նրանք մտցվում են: Այլապես այդ կլինի արհեստական միացում, վորը չի պատվաստվի սպորտային պրակտիկային:



Հինգերորդ. ֆիզիկական զարգացման նորմաներ սահմանել և լայն պրոպագանդա մղել դպրոցական նախազորակոչային տարիքի յերիտասարդության, ինչպես նաև արտադրական և պահեստի մասերի փոփոխական տերրիտորիալ կազմի մեջ: Այս նորմաները, ի հարկե, պետք է համապատասխան լինեն տարիքներին:

Վեցերորդ. ռազմա-գործնական համարները մտցնել զանազան տեսակի պարբերական և վոչ պարբերական մրցությունների ծրագրի մեջ: Այդ շատ կարևոր է, վորովհետև մրցությունը խթան է հանդիսանում վողջ մասսայական ֆիզկուլտաշխատանքի ծավալմանը: Կիրառելով ֆիզկուլտուրայի ռազմականացման այս հիմնական տարրերը, մենք դրանով այն կծառայեցնենք մեր յերկրի պաշտպանունակության ամրացման գործին:

## Ակումբի դերը գյուղում ռազմական աշխատանք կատարելու գործում

Քաղաքային պրոֆմիութենական կազմակերպությունների ակումբները պակաս դեր չունեն խաղալու գյուղում և առաջին հերթին նրա սոցիալիստական սեկտորում — խորհտնտեսություններում, կոլտնտեսություններում և մեքենա-տրակտորային կայաններում ռազմական պրոպագանդայի ու ռազմականացման ծավալման ոժանդակելու գործում:

Գյուղական ակումբներում, ժողովրդական տներում ու խրճիթ-ընթերցարաններում ռազմական անկյուններ կազմակերպելուց և այնտեղ ռազմական աշխատանք ծավալելուց բացի, պրոֆկազմակերպությունների քաղաքային ակումբները պետք է ակտիվ հրահանգիչներ ու ոգնականներ լինեն նրանց աշխատանքում, ինչպես ձեռնարկությունների կողմից գյուղի շեֆությունը վերցնելու գծով, այնպես ել ռազմա-ֆիզկուլտ հատուկ բրիգադներ, առանձին հրահանգիչներ ուղարկելու և այլ միջոցներով: Նրանք պետք է ոգնեն ՊԱԶԸ-Ավիաքիմի գյուղական կազմակերպություններին, ակումբներին և խրճիթ-ընթերցարաններին ռազմական աշխատանք կա-

տարկելու և այն ծավալելու գործում: Պետք է աշխատել, վորպեսզի խորհտնտեսությունները, կոլտնտեսությունները և մեքենա-տրակտորային կայանները ռազմական աշխատանքի օրինակելի կենտրոններ դառնան գյուղում:

## Նյութական բազայի հարցեր

Նյութական բազայի հարցերը խոշոր նշանակություն ունեն ռազմական պրոպագանդայի և աշխատավորության ռազմականացման հաջող ծավալման խնդրում:

Աշխատանքի հաջողությունն ապահովելու համար անհրաժեշտ է՝

Առաջին· ամրացնել ռազմական պրոպագանդայի հրաձգային սպորտի և ռազմա-տեխնիկական խմբակների կազմակերպման ծախքերը, այդպիսին հատկացնելով համաձայն ՀԱՄԿԽ-ի V պլենումի վորոշման, ՊԱՇԸ-Ավիաքիմի տեղական բջիջներին ռազմական աշխատանքի համար. այս գումարները պետք է ծախսվեն նախահաշվային կարգով և գործարկոմի վերահսկողությամբ:

Երկրորդ· նախատեսել միջմիութենական կազմակերպությունների՝ կամավոր հիմունքով հավաքված գումարների առանձնացում ռազմական աշխատանքի այնպիսի խոշոր ձեռնարկումների կիրառման համար, վորոնք պրոֆմիության անդամներին ընդգրկում են համաքաղաքայի՛ն, շրջանային կամ փնջային մասշտաբով (հրաձգարանների և գազապատսպարանների շինարարություն, ճամբարների, արշավների ու էքսկուրսիաների կազմակերպում և այլն):

Երրորդ· ռազմական անկյունների, խմբակների և ռազմա-ուսումնական շարային միավորների աշխատանքն ապահովել համապատասխան մշտական շենքերով, ակմբային ընդհանուր որացույցի մեջ մտցված հաստատուն պարապմունքային ժամերով (առնվազն մեկ անգամ հնգօրյակում կամ տասնօրյակում):

Չորրորդ· լայն ծավալել ՊԱՇԸ-Ավիաքիմի վիճակախաղերի տոմսերը տարածելու և պաշտպանության



ֆոնդի միջոցները հավաքելու ագիտացիան (դիրիժաբլների, ինքնաթիռների, տանկերի կառուցում և այլն):

## Ակումբի ռազմական ակտիվի պատրաստությունը

Ակումբները ռազմական պրոպագանդայի ուղղությամբ կատարելիք աշխատանքն ըստ ամենայնի լրիվ ապահովել կկարողանան միայն այն ժամանակ, յերբ ՊԱՇԸ-Ավիաքիմի բջիջների անդամներից և պրոֆակտիվիստներից ռազմական ակտիվ կստեղծեն, կողագործեն պահեստի հրամկազմին, կարմիր բանակայիններին, արձակուրդավորներին և այլն: ՊԱՇԸ-Ավիաքիմի բջիջների ակտիվը առաջամարտիկը պետք է լինի բոլոր այն ձեռնարկումների ժամանակ, վոր ակումբը անց է կացնում ռազմական պրոպագանդայի ուղղությամբ: Մասսայական ձեռնարկումների կիրառման ժամանակ ակտիվը կոնսուլտանտներ և կազմակերպիչներ պետք է տա: Սրան զուգընթաց, պետք է աշխատել, վորպեսզի ակումբների հաստիքային աշխատողները և ակումբի ակտիվը համապատասխան ռազմական վորակավորում ստանան, վորի համար անհրաժեշտ է, վոր պրոֆկազմակերպությունները ՊԱՇԸ-Ավիաքիմի հետ միասին ակումբներին կից կազմակերպեն և վարեն ակումբային ռազմական պրոպագանդայի հարցերին նվիրված հատուկ կուրս-կոնֆերանսներ: Այս կուրսերում անհրաժեշտ է անցկացնել, ինչքան վոր այդ հնարավոր է, վողջ ակմբային ակտիվին:

Առանձին ուշադրության է արժանի պահեստի հրամկազմին, ԲԳԿԲ-ի զորամասերի հրամանատարներին ու ակտիվ կարմիր բանակայիններին և առաջին հերթին յենթաշեֆ զորամասերի հրամանատարներին և կարմիր բանակայիններին ակմբային աշխատանքի ներգրավելու հարցը. նրանք, ինչպես ասացինք, պատասխանատու պետք է լինեն ռազմական աշխատանքի կազմակերպման համար այն ձեռնարկությունում կամ ակումբում, վորոնք վերցրել են Կարմիր Բանակի այս կամ այն զորամասի շեֆությունը:

## III. ԱԿՈՒՄԲՆԵՐԸ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ԱՆԿՅՈՒՆՆԵՐԸ ԶՈՐԱՀԱՎԱՔԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՅԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ

### Ակումբների և կարմիր անկյունների հիմնական խնդիրները

*Ակումբների և կարմիր անկյունների ագիտացիոն-մասսայական ու կուլտուր-քաղաքական աշխատանքը զորահավաքի շրջանում և պատերազմի ժամանակ պետք է լուսաբանի, գլխավորապես, հետևյալ հարցերը.*

1. Պատերազմի պատճառը և նրա դասակարգային բնույթը (*իմպերիալիստների հարձակում, մեր կողմից մղվելիք պատերազմի պաշտպանողական բնույթը, պատերազմի հեղափոխական-դասակարգային բնույթը*).

2. Միջազգային և ներքին իրադրությունը *մոբիլիզացիայի պահին (կապիտալիստների հակասությունները, միջազգային բանվորական շարժման հարցերը, ԽՍՀՄ ժողովուրդների միասնությունը և այլն)։*

3. Կոմունիստական կուսակցության դերը և *իմպերիալիստական պատերազմի վերածումը քաղաքացիական պատերազմի։*

4. ԽՍՀՄ-ի հզորությունը մոբիլիզացիայի պահին (*սոցշինարարության հաջողությունները*).

*5. Կուսակցության, պրոֆմիությունների և տեղական մարմինների լոզունգներն ու միջոցառումները զորահավաքի և պատերազմի կապակցությամբ։*

*Ագիտացիոն մասսայական բացատրական և լուսավորական աշխատանքի ոլորտում առանձնապես կարևոր մոմենտներ պետք է լինեն հետևյալները.*

*1. Ակումբները և կարմիր անկյունները պետք է ձեռնարկեն այնպիսի միջոցառումների, վորոնք նպատակ ունենան ապահովելու զորակոչիկների ժամանակին ու լրիվ հայտը հավաքակայաններն ու զորամասերը.*

*2. Պարզաբանել այն նոր օրենքները, վոր կսահմանի կառավարությունը պատերազմի ժամանակ, հատկապես բանակ կանչված բանվորների ու ծառայողների ընտանիքների ապահովման, սոցիալական ապահովության և ապահովագրման գծով.*



*3. Պայքարել պասիվության, մորթապաշտության, հարբեցողության, հին ցարական տրադիցիաների կրկնության դեմ, ինչպես նաև միջոցներ ձեռք առնել ապահովելու հեղափոխական կարգը և պայքարելու հակախորհրդային ագիտացիայի դեմ.*

*4. Պայքարել աշխատանքային կարգապահության ամրացման, աշխատանքի արտադրողականության բարձրացման համար, պարզաբանել արդյունաբերության դերն ու նշանակությունը պատերազմի հաջողության գործում։*

*Զորահավաքի շրջանում և պատերազմի ժամանակ ձեռնարկությունների ու հիմնարկությունների ակումբներն ու կարմիր անկյունները հիմնական միջոցները պետք է լինեն պրոֆմիությունների համար այն աշխատանքում, վոր պետք է տանեն նրանք աշխատավորության մասսայական ու կուլտուրական սպասարկման և թիկունքի ամրացման ուղղությամբ։*

*Միանգամայն հասկանալի յե, վոր զորահավաքի շրջանում ակումբային աշխատանքն այնպես պետք է վերակառուցել, վոր նա կարողանա բանվոր դասակարգի ուշադրությունը առավելագույն չափով սևեռել յերկրի պաշտպանության խնդիրների շուրջը։*

*Վերջին տարիների ընթացքում կառավարության կողմից անցկացված փորձնական մոբիլիզացիաների արդյունքները ցույց տվին, վոր պրոֆկազմակերպությունների ակումբներն իրենց աշխատանքի բովանդակությամբ և ձևերով բավականաչափ հաշվի չեն առել զորահավաքի խնդիրները, յերկրի պաշտպանության ամրացման հարցերը. նրանք չկարողացան աշխատավորության ուշադրությունը բավականաչափ սևեռել այն ընթացիկ քաղաքական մոմենտների շուրջը, վորպիսիք կային փորձնական մոբիլիզացիաների շրջանում։ Յեղան դեպքեր, յերբ ակումբներն ուշացան աշխատանք ծավալել. մի քանի ակումբներ իրենց աշխատանքը վերակառուցեցին ու հարմարեցրին զորահավաքի խնդիրներին վերջինս հայտարարելուց յերկու-յերեք որ հետո միայն։*

Դեզարմիստական ագիտացիան թույլ շաղկապվեց պաշտպանության հարցերին և փորձնական զորահավաքների խնդիրներին, բավարար չափով չլուսաբանվեցին միջազգային և ներքին դրության հարցերը: Թատրոնների և ակումբների ուշադրությունը թույլ չափով մոբիլիզացիայի յենթարկվեց այս հարցերի շուրջը:

Մենք գտնում ենք, վոր ակմբային աշխատանքի թե՛ բովանդակությունը և թե՛ բոլոր ձևերը զորահավաքի շրջանում և պատերազմի ժամանակ պետք է կենտրոնացվեն պրոլետարիատի ակտիվությունը յերկրի պաշտպանության, զորահավաքի անցկացման, զինակոչիկների 100 տոկոսով ներկայացման խնդիրների շուրջը մոբիլիզացիայի յենթարկելու, զգաստության, ցարական զինվորագրման արտոնությունների և պանիկյորության դրսևորումների դեմ պայքարելու, պրոլետարիատի աչալրջությունը բարձրացնելու, լրտեսության ու վնասարարության դեմ պայքարելու, աշխատանքային կարգապահությունն ամրացնելու, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու, սոցմրցումն ու հարվածայնությունը էլ ավելի բարձր աստիճանի փոխադրելու և պատերազմական ժամանակի արդֆինպլանները կատարելու խնդիրների վրա:

Ակումբների և կարմիր անկյունների աշխատանքը զորահավաքի շրջանում պետք է իրեն նպատակ դնի առաջին հերթին սպասարկել բանակ կանչված և ձեռնարկություններում մնացած բանվորներին և նրանց ընտանիքներին (առանձնապես կանանց), ինչպես նաև բանվորական այն նոր կադրերին, վորոնք արտադրություն են գալիս բանակ կանչվածներին փոխարինելու համար:

## Ակումբային աշխատանքի վերակառուցումը զորահավաքի պայմաններում

Ակումբները և կարմիր անկյունները զորահավաքի շրջանում իրենց աշխատանքի կենտրոնակետ պետք է դարձնեն մասսայական աշխատանքի ծավալումը, խմ-



բակների, հանձնաժողովների և սեկցիաների աշխատանքի կրճատման հաշվին: Միաժամանակ ակումբների և կարմիր անկյունների աշխատանքը բավականաչափ ճկուն պետք է լինի, վորպեսզի նրանք կարողանան ժամանակին և առանց հապաղման արձագանքել իրադարձություններին և բանվորների բոլոր պահանջներին: Ակմբային աշխատանքով րաս ամենայնի մեծ ճկունությամբ բանվորների ու ծառայողների, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներին ընդգրկելու նպատակով, անհրաժեշտ է ակումբների և կարմիր անկյունների աշխատանքը պատերազմն ակամբերյան պես փոխադրել ցեխերն ու հանրակացարանները, ինչպես նաև սպասարկել բոլոր հերթերին այն ձեռնարկություններում, վորտեղ բազմահերթ աշխատանք գոյություն ունի:

Զորահավաքի շրջանում ակումբների աշխատանքը ժամանակին ու լրիվ ծավալել կարողանալու համար հարկավոր է աշխատանքի լծել ակումբի վողջ ակտիվին: Ընդ վորում հարկավոր է այս կամ այն ակմբային միջոցառման կիրառման պատասխանատվությունը դնել առանձին աշխատողների և առանձին ակտիվիստների վրա: Այդ առավել ևս կարևոր է նրա համար, վոր ակումբների հաստիքային աշխատողների մի մասը, վորպես զինապարտ, բանակ կգնա:

Բնական է, վոր զորահավաքի հետևանքով ակումբային շենքերի և գույքի մի մասը հանձնվելու յե զինվորական իշխանությանը՝ զորամասերի կարիքների համար: Այստեղից՝ խնդիր է դրվում ակումբների առաջ ժամանակին ձեռնարկել այդ հանձնումը, մասսայական աշխատանքը ձեռնարկությունների կարմիր անկյունները փոխադրել և կամ թե միացնել հարևան ձեռնարկության ակումբի հետ:

Գրադարանների և ընթերցարանների աշխատանքը զորահավաքի շրջանում անհրաժեշտ է վերակառուցել և հարմարեցնել աշխատավորության պատերազմի ժամանակի պահանջներին: Ուստի գրադարանների և ընթերցարանների աշխատանքում անհրաժեշտ է նախատեսել

ռազմական գրքերի ցուցափեղկի կազմակերպումը, հատկապես առանձնացնելով քաղաքացիական կռիվների պատմությանը նվիրված գրականությունը, քաղաքացիական կռիվների ժամանակ կատարված հերոսական սխրագործություններին վերաբերյալ բրոշյուրները, ապա նաև գրականության առաջին օգնության, հակառակորդի տեխնիկական ուժերի դեմ պայքարելու մեթոդների և նման այլ խնդիրների մասին: Սրան զուգընթաց, անհրաժեշտ է մի շարք միջոցառումներ ձեռնարկել ռազմական գրքի պրոպագանդայի ուղղությամբ:

Ակումբների և կարմիր անկյունների ամբողջ աշխատանքում լայն ինֆորմացիա պետք է կազմակերպել ռազմական գործողությունների ընթացքի, յերկրի ներսում, ռազմաճակատում և կապիտալիստական յերկրներում տիրող դրության մասին:

## Բացատրական և տեղեկատու աշխատանք

Լայնորեն դրված, ժամանակին ու ճիշտ կազմակերպված բացատրական-տեղեկատու աշխատանքը և իրավաբանական կոնսուլտացիան բացառիկ նշանակություն են ստանում ակումբների ագիտացիոն-մասսայական ու բացատրական աշխատանքի ամբողջ սիստեմում զորահավաքի շրջանում:

Փորձը ցույց է տվել, վոր զորահավաքի յենթարկվածներն ամենից ավելի հետաքրքրվում են այնպիսի հարցերով, վորոնք կապված են նրանց՝ իբրև զինվորների՝ պարտականությունների հետ: Մինչև զորակոչի յենթակա բանվորների ներկայանալը պահեստային հավաքակայաններում և զորամասերում նրանց բնականաբար կհետաքրքրի այն հարցը, թե ո՞վ պետք է ներկայանա, ներկայանալու և ստացման կարգը, ինչպիսի պարտականություններ ունեն նրանք իբրև զորակոչային, ինչպես է սարքավորվելու նրանց ընտանիքը, ձեռնարկության հետ հաշիվները փակելու կարգն ու կանոնները, գործիքները հանձնելը և այլն:

Վոչ վոքի համար գաղտնիք չէ, վոր քանի դեռ Խ. Միության ազգաբնակությունը բավականաչափ կուլտուրական ու գրագետ չէ, մեզ համար նրա մոբիլիզացիոն անպատրաստությունը առանձնապես զգալի կլինի: Ահա թե ինչու Խ. Միության աշխատավորության առաջ նրա ռազմական անպատրաստությունը վերացնելու հետ մեկտեղ պետք է առանձնապես սրվի ուշադրությունը մոբիլիզացիոն անպատրաստության վերացման ուղղությամբ:

Զորահավաքի շրջանում բացատրական-տեղեկատու աշխատանքն ու իրավաբանական կոնսուլտացիան ժամանակին ու պլանային կարգով ծավալելու և նրանով պրոֆմիության անդամներին (բանվորներին, ծառայողներին ու նրանց ընտանիքի անդամներին), իսկ առանձին բնակավայրերում՝ նաև վողջ աշխատավորությանը բավականաչափ լրիվ կերպով ընդգրկելու համար, անհրաժեշտ է դեռևս խաղաղ ժամանակ իմանալ այն խնդիրները, վոր հետապնդում է տեղեկատու աշխատանքը, իմանալ նրա կազմակերպման կարգը, նրա կիրառման մեթոդներն ու ձևերը:

Զորահավաքի մասին տրվող հրամանները, շնորհիվ այն հանգամանքի, վոր այնտեղ կլինեն ռազմական բարդ տերմիններ, մատչելի չեն լինի բոլոր բանվորների համար, ուստի առանձնապես կարևոր նշանակություն պետք է տալ զորահավաքի կարգի ու զորահավաքի յենթարկվողների պարտականությունների վերաբերյալ տեղեկանքներին, վորի համար պետք է կազմակերպել տեղական մարմինների հրամանների, հայտարարությունների ու վորոշումների պարզաբանման գործը: Այդ հարցերի մասին առանձնապես ճիշտ հրահանգներ պետք է տրվեն տեղեկատու սեղանների (բյուրոների) բոլոր աշխատողներին, վորովհետև հրամանները հայտարարելու և պարզաբանելու հետ միասին՝ տեղեկատու սեղանների աշխատողները պարտավոր են նաև ագիտացիոն աշխատանք կատարել և քաղաքական ինֆորմացիա տալ: Տեղեկատու սեղանների աշխատողներին պետք է վերցնել քաղաքականապես գրագետ կուսակցականներից, կոմյերիտականներից, պրոֆակտիվից և բանվորներից:

Հարկավոր է նույնպես ինչքան հնարավոր է լայն կիրառել հայտարարությունների և հարց ու պատասխանի պլակատների միջոցով տեղեկատու աշխատանք ծավալելու պրակտիկան: Մանավորապես չափազանց օգտակար է տեղեկատու սեղանի կողքին աչքի զարկող տեղում կախ տալ զորակոչի հայտարարությունը, զորակոչի յենթակաների ներկայանալու կարգը, նրանց պարտականությունները, ձեռնարկությունների հետ հաշիվները փակելու կարգն ու կանոնները, զորակոչվածների արտոնություններին վերաբերյալ տեղեկությունները և այլն:

Ձեռնարկություններում մնացող բանվորներին և նրանց ընտանիքներին հետաքրքրող ամենից ավելի հրատապ հարցերից կլինեն անկասկած այն հարցերը, թե ինչ արտոնություններ են տրվում բանակ կանչվածների ընտանիքներին, ինչ իրավունքներ ու պարտականություններ ունեն բանվորներն ու ծառայողները պատերազմի ժամանակ, ինչպիսի կարգով են մատակարարվելու մթերքներն ու առաջին անհրաժեշտության ապրանքները, ապա նաև տեղեկություններ մեր հակառակորդների յերկրի միջազգային ու ներքին դրության և այդ կարգի այլ հարցերի մասին:

Այստեղից հետևում է այն, վոր տեղեկատու աշխատանքն ըստ բովանդակության պետք է նպատակ ունենա պարզաբանելու բանվորներին, նրանց ընտանիքներին ու բանակ կանչվածներին հուզող այն էական հարցերը, վոր կապված են զորահավաքի ու նրանից բխող այն պարտականությունների հետ, վորպիսին պետք է ունենան արտադրական բանվորները:

Տեղեկատու աշխատանքը չի կարելի սահմանափակել միմիայն տեղեկատու սեղաններով: Ձեռնարկությունում, ակումբում և կարմիր անկյունում այդ աշխատանքը պետք է կատարի ամբողջ գործարկոմը, ակումբի ամբողջ ակտիվը, նրա յուրաքանչյուր առանձին աշխատողը, յուրաքանչյուր պրոֆակտիվիստը և այլն:



Տեղեկատու սեղանները հիմնականում պետք է ծառայեն լոկ իբրև կենտրոններ, վոր պետք է բացատրական աշխատանք կազմակերպեն աշխատավորական մասսաների և զորակոչվածների մեջ:

Քանի վոր տեղեկանքները չափազանց շատ են, ուստի տեղեկատու սեղաններն ի վիճակի չեն լինի ընդգրկելու ամբողջ մասսային: Հետևաբար անհրաժեշտ է, վորպեսզի տեղեկատու սեղանի առանձին աշխատողներն ամբողջ ժամանակ շրջագայեն հավաքված բանվորների մեջ և տեղի վրա տան այս կամ այն տեղեկանքը:

Մեծ նշանակություն ունի տեղեկատու սեղաններ կազմակերպելու համար կետեր վորոշելը: Այդպիսի կետեր պետք է լինեն ձեռնարկությունների ակումբներն ու կարմիր անկյունները, բանվորների ամենամեծ կուտակման վայրերը անմիջապես ձեռնարկություններում, հանրակացարաններն ու կազարմաները, կոնտրոլ բուդկաները և այլն:

Տեղեկատու աշխատանքի համար պետք է օգտագործել (տեղեկանքների բաժիններ կազմակերպելու միջոցով) կինոխրոնիկան, ռադիո-հաղորդումը, լուսային պլակատներ և այլն:

## Գեղարվեստական ագիտացիա

Մասսայական-գեղարվեստական յելույթների և ժամանցների հետ կապված մասսայական-գեղարվեստական աշխատանքը պետք է առաջին հերթին ծառայի աշխատավորության և զորակոչվածների մեջ առույգ ու մարտական տրամադրություն և հեղափոխական վերելք ստեղծելու նպատակներին:

Գեղարվեստական պրոպագանդան ու գեղարվեստական ժամանցը համապատասխան տեղ պետք է ունենան հավաքակայաններում: Զորակոչայինների հաճախ ձանձրալի սպասումներին վերջ պետք է տալ՝ գործադրելով գեղարվեստական ագիտացիայի ամենից ավելի հետաքրքիր ձևերը, վորոնց շարքը պետք է դասել առաջին հերթին եստրադային համերգային և դրամատիկական խմբակների վոչ-յերկար յելույթները, յերաժշտ-

ռությունը, կենդանի լրագիրը, փոքրիկ բեմադրումներ, ագիտ-պիեսներ, պարեր, նվագ, յուրգերգություն, զվարճալի առակներ: Հիմնականում հարկավոր է լայն օգտագործել նախօրոք պատրաստված բեմադրումները, լրացնելով բարդ համարանքներ ու յերկարատև նախապատրաստություն չպահանջող այնպիսի ագիտ-պիեսներով, վորոնք նվիրված լինեն որվա հրատապ հարցերին: Ամենից ավելի հաջող են այն բեմադրումները, վորոնք արտացոլում են քաղաքացիական կռիվների մոմենտները, Կ. Բանակի կենցաղը և այլն, ուստի պիեսների և կինո-նկարների ընտրություն կատարելիս այս կողմի վրա անհրաժեշտ է ուշադրություն դարձնել: Ամառները մասսայական-գեղարվեստական աշխատանքը պետք է փոխադրել փողոցը, այն վայրերը, վորտեղ ամենից ավելի յեն հավաքվում աշխատավորները:

Ինքն ըստինքյան հասկանալի յե, վոր գեղարվեստական աշխատանքի մեր մատնանշած ձևերը պետք է լիովին օգտագործվեն վոչ միայն զորակոչվող բանվորների, այլ և զորահավաքի վոչ յենթակա բոլոր աշխատավորների սպասարկման համար:

## Մամուլի ագիտացիան

Ագիտացիան և մասսայական-բացատրական աշխատանքը լոկ բանավոր ագիտացիայով սահմանափակվել չի կարող. այդ խնդրում խոշոր անելիք ունի նաև մամուլը:

Մամուլի ագիտացիայի գլխավոր խնդիրն է՝ տպագրել և տարածել այնպիսի գրականություն, վոր առանձնապես հետաքրքիր ու հասկանալի լինի աշխատավորության և զորակոչայինների համար:

Մամուլային ագիտացիայի զանազան ձևերից զորահավաքի ժամանակ հատուկ նշանակություն են ստանում հետևյալները—թերթեր (տպագիր ու պատի), ագիտ-հաղորդագրություններ, թռուցիկներ, կոչեր, պլակատներ և լոզունգներ: Լոզունգների և ընդհանուր քաղաքական հարցերը լուսաբանող բրոշյուրների հետ միա-



սին անհրաժեշտ է հրատարակել և տարածել նաև այնպիսի գրականություն, վորը շոշափելիս լինի զանազան կոնկրետ ու մասնակի հարցեր, մասնավորապես տեղեկանքներ բանակ կանչվածների ընտանիքներին տրվող արտոնությունների մասին, տեղեկություններ մեր հակառակորդների մասին, վերջին իրադարձությունների տեղեկագրեր, զորակոչվածների հուշատետրեր, տեղական թերթեր և այլն:

Միաժամանակ գերազանցություն պետք է տալ խըմբակային ընթերցանությունների կազմակերպմանը: Այդպիսի ընթերցանություններ պետք է կազմակերպել վոչ միայն զորակոչվածների համար, այլև բանվորների համար՝ ձեռնարկություններում, կարմիր անկյուններում, ակումբներում և այլ այնպիսի վայրերում, վորտեղ հավաքվում են բանվորները:

Ձեռնարկությունները, ակումբները և հիմնարկությունները մամուլի ագիտացիայի այս միջոցների մեծ մասը (բացի ագիտ-հաղորդագրություններից, պատի և գործարանային թերթերից) ստանալու յեն վերադաս պրոֆկազմակերպությունների և կուսմարմինների միջոցով: Ակումբների վրա պարտականություն է դրվում ստանալ և բաժանել այս նյութերը, ինչպես նաև կազմակերպել նրանց ըստ ամենայնի նպատակահարմար օգտագործումը ձեռնարկությունների բանվորների և ծառայողների մեջ: Ագիտնյութերը գլխավորապես պետք է փակցվեն այն վայրերում, վորտեղ ամենից ավելի յեն հավաքվում աշխատավորները:

Պատի և գործարանային թերթերը զորահավաքի շրջանում պետք է լուսաբանեն գլխավորապես զորահավաքի ընթացքի, նրա հաջող անցկացման կարևորության ու անհրաժեշտության վերաբերյալ փաստական նյութեր, ստեղծեն առույգ, մարտական տրամադրություն ձեռնարկությունում մնացած բանվորների մեջ, դատափետեն բացասական փաստերը (հարբեցողությունը, ժամանակին չներկայանալը, գործալքությունը, դասալքությունը):

## Կինոն և ռադիոն

Կինոն և ռադիոն, որպես մասսայական ագիտացիայի միջոցներ, վիթխարի դեր պետք է խաղան զորահավաքի շրջանում: Փորձնական զորահավաքները ցույց տվին, որ գեղարվեստական ագիտացիայի ու պրոպագանդայի բոլոր միջոցների մեջ նշանակալից տեղ են գրավում կինոն և ռադիոն, սակայն կինոն ունեցավ նաև խոշոր բացասական կողմեր, գլխավորապես այն, որ կինո-ռեպերտուարի ընտրությունը հաջող չեղավ (թե բովանդակությամբ և թե այժմեականությամբ), կամ բավականաչափ լայն չօգտագործվեց:

Ակումբները զորահավաքի շրջանում կինո-սեանսներով պետք է սպասարկեն վոչ միայն իրենց ձեռնարկության և հիմնարկության բանվորներին ու ծառայողներին, այլև լայն աջակցություն ցույց տան զինվորական գերատեսչության մարմիններին՝ զինապարտներին ու զորամասերին սպասարկելու գործում: Մեծ հաջողություն կունենա կինոն բացօթյա կազմակերպելիս, որովհետև նա ավելի մեծ քանակությամբ մարդկանց կկարողանա սպասարկել: Միանգամայն նպատակահարմար է կինո-սեանսներն սկսելուց առաջ ագիտատորների վոչ-յերկար յելույթներ կազմակերպել:

Ռադիոյի սպասարկման հարցում կարևոր մոմենտ է հանդիսանում ռադիո-միջոցների դրությունը:

Դժբախտաբար, դեռես կան դեպքեր, որ խաղաղ ժամանակն անգամ բարձրախոսները այս կամ այն տեխնիկական պակասության պատճառով չեն աշխատում:

Ազդարարության ռադիո-անդրադարձության վերացման և ռադիո-սարքավորումների դրության վերահսկողության հարցերը ուշադրության կենտրոնակետը պիտի կազմեն:

## Աշխատանքը կանանց մեջ

Փորձնական զորահավաքների ժամանակ ակումբների և կարմիր անկյունների աշխատանքը կանանց մեջ թույլ էր կազմակերպված, այնինչ թե բանվորների ու



ծառայողների կանանց և թե հիմնարկ-ձեռնարկներում աշխատող բոլոր կանանց մեջ զորահավաքի ու պատերազմի ժամանակ աշխատանք կատարելը չափազանց խոշոր նշանակություն ունի: Ակումբների աշխատանքի այս բնագավառը պրոֆմիությունները չպետք է մոռացության մատնեն իսկական զորահավաքի ժամանակ, վորի ընթացքում անհրաժեշտ կլինի բացատրական մեծ կամպանիա ծավալել կանանց մեջ՝ մեր վրա փաթաթված պատերազմի պատճառների և այն խոշոր դերի մասին, վոր ընկնում է կանանց վրա պատերազմի ժամանակ (խմբակների միջոցով գթության քույրեր պատրաստել, համազգեստներ կարելու համար խմբակներ կազմակերպել, ռազմաճակատ նվերներ ուղարկելու համար հանգանակություն կատարել և այլն):

## Ռազմական պատրաստության ուժեղացումը

Պատերազմի ժամանակ ակումբների աշխատանքում առաջնակարգ տեղ պետք է գրավի աշխատավորության ուժգին ռազմական պատրաստության ծավալելու հարցը: Անհրաժեշտ է, վորպեսզի ակումբները կուլտուր-քաղաքական աշխատանքի ամբողջ սիստեմի միջոցով է՛լ ավելի լայն ծավալեն բանվորների ու ծառայողների ռազմական պատրաստությունն ուժեղացնելու աշխատանքը (ռազմա-հրաձգային պատրաստություն, գթության քույրերի պատրաստություն, զանազան ռազմական տեխնիկական խմբակների կազմակերպում և այլն):

Ռազմական պրոպագանդայի և ռազմականացման այս ամբողջ աշխատանքը պետք է տարվի Պաշտ-Ավիաքիմի կազմակերպությունների հետ միասին, վորոնց և ակումբներն ու կարմիր անկյունները ամեն կերպ պետք է աջակցեն: Ակումբներն առանձնապես մեծ ուշադրություն պետք է կենտրոնացնեն Կարմիր բանակի հետ կապն էլ ավելի ընդլայնելու և ամրացնելու ուղղությամբ, վորի համար պետք է վերցնեն գործոն բանակի զորամասերի շեֆությունը, պատգամավորություն ուղարկեն ռազմաճակատ և կուլտուր-քաղաքական միջոցներով սպասարկեն տեղական զորամասերին:

## Զորակոչվածների սպասարկումը ակումբների միջոցով

Զորակոչի չենթակա բանվորների մեջ, դեռ նախքան հավաքակայաններն ու զորամասերը ներկայանալը ակումբները պետք է ծավալեն իրենց աշխատանքի բոլոր ձևերն ու տեսակները: Առանձին հանդիսավորությամբ պետք է կազմակերպել զորակոչվածների հրաժեշտի հավաքույթները և բանվորների ու շրջանային զորակոչիկների հանդիպումները, նրանց մասնակից դարձնելով բանվորներին ու բանվորուհիներին, տեղական կուսակցական, պրոֆեսիոնալ, կոմյերիտական և այլ կազմակերպություններին:

Հրաժեշտի հանդիսավոր հավաքույթներում պետք է կազմակերպել զորակոչվածների ու մնացողների ելույթներ և փոխադարձ նակազների ընդունումը: Ակումբներին կից պետք է կազմակերպել բանվորների ու բանակ կանչվածների կապի բյուրոներ, վորոնց միջոցով մշտական կապ պահպանել ճակատ գնացած անդամների հետ:

Ակումբի կոնկրետ մասնակցությունը հավաքակայանների ու զորամասերի սպասարկման գործում պետք է արտահայտվի նրանով, վոր ակումբը հատուկ աշխատողներ պետք է տա զորակոչվածների հետ զրույցներ, դասախոսություններ ու զեկուցումներ ունենալու համար եստրադային ելույթներ ու կենդանի լրագրեր կազմակերպի, թերթեր, գրականություն և այլ տիպի տպագիր նյութեր հայթայթի: Սրան զուգընթաց, ակումբները պետք է ակտիվ մասնակցություն ունենան հանդիսավոր հանդիպումների և հրաժեշտի հավաքույթների կազմակերպման գործում:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Առաջաբան . . . . . . . . . . . . . . 3

I. Կուլտ-կրթական աշխատանքը յերկրի պաշտպանության ամրացման գործում . . . . . . . . . . . . 4

II. Ռազմական պրոպագանդան ակումբում . . . . . . 10

III. Ակումբները և կարմիր անկյունները զորահավաքի շրջանում և պատերազմի ժամանակ . . . . . . . . 28

ՀՀ Ազգային գրադարան
NL0226319

53 102

ԳԻՆԸ 15 ԿՈՊ. ($1^{1}/_{4}$ մ.)

Н. ДУБРОВСКИЙ и ПАВЛЮЧЕНКО

КЛУБЫ и КРАСНЫЕ УГОЛКИ В ОБОРОНЕ СТРАНЫ

Госиздат ССР Армении
Эривань — 1931